ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

Դ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

«Գերմանական սոցիալ-դեմոկրատիան և Հայկական հարցը» հիմնախնդիրը գրեթե ուսումնասիրված չէ։ Մինչդեռ այն ունի ոչ միայն պատմական, այլև արդիական նշանակություն, քանզի սոցիալ-դեմոկրատիան ժողովուրդների, ազգերի ճակատագրում մեծ դեր է խաղացել ու շարունակում է խաղալ։ Հիշյալ խնդրի մասին նյութերը քիչ չեն, սակայն երկար տարիներ դրանք մնացել են հետազոտողների տեսադաշտից դուրս՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ ստալինյան միտումնավոր քաղաքականության պատճառով, որը 1930—50-ական թվականների պատմագիտական գրականության մեջ գերիշխող էր դարձել։

XIX դ. վերջին և XX դ. սկզբին գերմանական սոցիալ-դեմոկրատիան երկրորդ ինտերնացիոնալի ամենաուժեղ և ամենաազդեցիկ կուսակցությունն էր։ Նրա շատ ականավոր գործիչներ զբաղվել են Արևելյան և նրա անբաժան մասը կազմող Հայկական հարցով։ Այն ժամանակ, երբ Գերմանիայի կառավարող շրջանները և մի շարք գործիչներ Թուրքամետ քաղաքականություն էին վարում, գերմանական սոցիալ-դեմոկրատների ղեկավարների ճնշող մեծամասնությունը հանդես էր գալիս Թուրքիայի՝ որպես հետադիմական և ազգակործան կայսրության քննադատությամբ ու նրա լծի տակ տառապող ժողովուրդների պաշտպանությամբ։ Եվ այդ այն ժամանակ, երբ գերմանական կայսր Վիլհելմ Երկրորդը սուլթան Աբդուլ Համիդին հավաստիացնում էր. «Թող սուլթանը և նրա խալիֆները՝ ցրված երկրագնդի զանազան անկյունները, հավատացած լինեն, որ բոլոր ժամանակներում էլ գերմանական կայսրը պիտի նրանց բարեկամը լինի»[1]։

1896—1897 թթ. կրետացիների ապստամբության, հույն-թուրքական պատերազմի և հայկական կոտորածների ու ինքնապաշտպանական կռիվների ուժեղացման հետևանքով կրկին սրվում է Արևելյան հարցը։ Գերմանիայում դրան նվիրված բազմաթիվ գրքեր ու հոդվածներ են տպագրվում։ Լայն բանավեճ էր ընթանում սոցիալ-դեմոկրատիայի տեսական հանդես «Դի Նոյե Ցայտի» (Շտուտգարդ), կենտրոնական օրգան «Ֆորվեստի» (Բեռլին), «Զեխսիշե, Արբայթեր-Ցայտունգի» (Դրեզդեն) և այլ թերթերի էջերում։ Ծավալուն հոդվածներով հանդես են գալիս Վիլհելմ Լիբկնեխտը, Աֆգուստ Բեբելը, Կարլ Կաուցկին, Էդուարդ Բերնշտայնը, Ռոզա Լյուքսեմբուրգը, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ղեկավար Ավետիք Նազարբեկյանը (Նազարբեկ) և ուրիշներ։

Վ. Լիբկնեխտը (1826—1900) «Արևելյան հարցի շուրջ կամ պե՞տք է արդյոք Եվրոպան կազակային դառնա։ Նախազգուշացման խոսք գերմանական ժողովրդին» գրքույկում, որը 1870-ական թվականներին լույս էր տեսել երկու հրատարակությամբ, գերմանական ռայխստագում ունեցած իր ելույթներում և սոցիալ-դեմոկրատական մամուլում տպագրված հոդվածներում պաշտպանում էր այն տեսակետը, որ Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը կանխելու համար անհրաժեշտ է Ռուսաստանի դեմ

---

1 Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907, էջ 3։

զինված միջամտության դիմել՝ պաշտպանելով Թուրքիային, դատապարտել նրա դեմ ուղղված բոլոր ելույթները։ 1897 թ. «Ֆորվերտսում» տպագրված իր հոդվածում Վ. Լիբկնեխտը զարգացնում է «Արևելյան հարցի շուրջ կամ պե՞տք է արդյոք Եվրոպան կազակային դառնա» գրքույկի գրությունները։ Ամեն ինչում դատապարտելով Ռուսաստանին և պաշտպանելով Թուրքիային՝ Վ. Լիբկնեխտը անհիմն մեղադրանքներ է հարուցում օսմանյան լծից իրենց ազատագրության համար պայքարող հայերի և կրետացիների դեմ։ Դա անգլիացի դիվանագետ, հետադիմական հրապարակախոս և քաղաքական գործիչ, Ռուսաստանի կատաղի թշնամի, հայտնի Թուրքամետ, Մերձավոր արևելքում անգլիական հետախուզության կազմակերպիչ Դավիթ Ուրքվարդի գրվածքների ազդեցության հետևանքն էր։ Ցավոք, Ուրքվարդի հայացքներն այդ ժամանակ ոչ միայն բացահայտ պաշտպանություն էին գտնում Վ. Լիբկնեխտի կողմից, այլև ներկայացվում էին որպես մարքսիստական տեսակետներ։ Վ. Լիբկնեխտի կենսազիր Կուրտ Էսները գրել է. «Լիբկնեխտը միշտ հատուկ հետաքրքրությամբ էր վերաբերվում արտաքին քաղաքականությանը։ Անգլիացի Ուրքվարդը վճռականորեն ազդել էր նրա վրա և որոշել նրա ուղղությունը։ Ռուսաստանի համաշխարհային ազդեցության դեմ պայքարը նրա գլխավոր ինդիրն էր։ Պե՞տք է արդյոք Եվրոպան կազակականության ազդեցության տակ լինի։ Այս հարցը նա միշտ առաջ էր քաշում»[3]։

1896 թ. Կ. Մարքսի մասին գրած իր հիշողություններում Վ. Լիբկնեխտը Դ. Ուրքվարդին համարում է «ռուսական դիվանագիտության և Թուրքիայի գրության լավագույն գիտակ», «Արևելյան հարցի առաջին կարգի գիտակ, եթե ոչ ընդհանրապես ամենաբարձր հեղինակությունը»[4]։ «Այն ամենը,—գրում է Վ. Լիբկնեխտը,—ինչ ինձ հաջողվեց անել կուսակցական մամուլում, գրքույկներում և ռայխստագում, մեր դասային դիվանագիտության և ռուսական քաղաքականության անընդունակությունը լուսաբանելու համար, ես պարտական եմ առաջին հերթին Ուրքվարդի ու նրա երկերի հետ ծանոթանալուն»[5]։ Ավելին, Վ. Լիբկնեխտը գրում է, որ իբր Կ. Մարքսը բարեկամական հարաբերություններ էր պահպանում Դ. Ուրքվարդի հետ և պաշտպանում էր նրա հայացքները[6]։

Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի՝ Դ. Ուրքվարդին տված գնահատականները, Արևելյան հարցի մասին նրանց գիտական հարուստ ժառանգության ուսումնասիրությունը հիմնովին ժխտում են Վ. Լիբկնեխտի՝ այս եզրակացությունը։ Մարքսն ու Էնգելսը Ուրքվարդին անվանել են «պառլամենտի խելացնոր դեպուտատ», «Թուրքերի երկրպագու», «իսկական Թուրք», «իսկական մոլագար»[7]։

1853 թ. մարտի 9-ին Մարքսին գրած նամակում Ֆ. Էնգելսը մերկացնելով «Թուրքերի երկրպագու» Ուրքվարդին, նշում է, որ վերջինս հիացած է իսլամով և օսմանյան Թուրքերին համարում է «աշխարհում ամենակատարյալ ազգը, Թուրքերենը՝ ամենակատարյալ և բարեհնչուն լեզուն», Թուրքիան՝ մի դրախտ, «որտեղ չկան և չեն կարող լինել դասակարգային տարբերություններ, դասակարգային պայքար, քաղաքական կուսակցություններ, որովհետև ներքին քաղաքականության մեջ բոլորը նույն կարծիքին են»[8]։ Նույն ժամանակ հրատարակած «Թուրքական հարցը» հոդվածում Ֆ. Էն-

---

[2] Vorwärst, 10. III. 1892, № 58.

[3] Курт Эснер, Вильгельм Либкнехт, Одесса, 1905, с. 65.

[4] В. Либкнехт, Воспоминания о Марксе, Одесса, 1905, с. 37.

[5] Նույն տեղում, էջ 33։

[6] Նույն տեղում, էջ 38։

[7] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 28, с. 186, 515. Գնահատելով Վ. Լիբկնեխտի ելույթները Ռուսաստանի դեմ, հօգուտ Թուրքիայի, Թուրքական կառավարող շրջանները որոշում են նրան պարգևատրել իրենց բարձր շքանշանով, որպես Վ. Լիբկնեխտը մերժում է (տե՛ս Курт Эснер, նշվ. աշխ., էջ 661).

[8] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 28, с. 186.

գելսը նշում է, որ Դ. Ուրքվարդը թուրքերի հետ միասին երեք տարի կռվելով Հունաստանում, դառնում է «թուրքերի առաջին կրքոտ երկրպագուներից»[9]։ Նույն հոդվածում Ֆ. Էնգելսը ցույց է տալիս, որ Թուրքիայում քաղաքակիրթ տարրերը հույները, հայերը, սլավոնները և արևմտյան եվրոպացիներն են։ «Փաստը մնում է փաստ,—նշում է Էնգելսը,—որ թուրքերից պետք է ազատվել»[10]։ 1854 թ. հունիսի 1-ին Ֆ. Լասալին գրած նամակում Կ. Մարքսը Դ. Ուրքվարդին անվանում է «ռոմանտիկ-ռեակցիոներ, իսկական թուրք, որը կյանկանար ամբողջ Արևմուտքը վերափոխել թուրքական ձևով և թուրքական կարգերի օրինակով»[11]։

Ֆրանց Մերինգը գրել է, որ Դ. Ուրքվարդը «մոլեռանդ ատելությամբ էր լցված ռուսների նկատմամբ և նույնպիսի մոլեռանդ հիացմունքով՝ թուրքերի»[12]։ Ուրքվարդի «քմահաճություններից մեկն էլ այն կարծիքն էր,—գրել է Ֆ. Մերինգը,—որ եվրոպական հեղափոխականները գիտակից կամ անգիտակից զենք են ցարիզմի ձեռքին, որն օգտվում է դրանից, որպեսզի դժվարություններ ստեղծի եվրոպական կառավարությունների համար»[13]։

1920-ական թվականներին պատմաբան Դ. Ռյազանովը գրել է. «Մարքսի ու Էնգելսի այն ժամանակ հայտնի երկերում, երբ Լիբկնեխտը գրել է իր հիշողությունները, արդեն կային բավականաչափ նյութեր՝ այդ հայացքները քննադատելու համար, իսկ 1897 թ. հանդես եկավ Էլեոնորա Էվելինգի ժողովածուն, որն անհերքելիորեն ապացուցեց, որ Ղրիմի պատերազմի ժամանակ Մարքսի բալկանյան քաղաքականությունը չի համընկել Ուրքվարդի քաղաքականությանը»[14]։ Է. Էվելինգի ժողովածուն հրատարակվել էր այն ժամանակ, երբ Կոստանդնուպոլսում հայկական կոտորածների, Կրետեում ելույթների և հույն-թուրքական պատերազմի հետևանքով կրկին բարձրացել էր Արևելյան հարցը, և գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը մշակում էր իր վերաբերմունքը դրա նկատմամբ։

Դեռևս 1878 թ., ի պատասխան Վ. Լիբկնեխտի «Արևելյան հարցի շուրջ կամ պե՞տք է արդյոք Եվրոպան կազակային դառնա։ Նախազգուշացման խոսք գերմանական ժողովրդին» գրքույկի, Յուրիխում լույս է տեսնում Երիսաուարդ սոցիալ-դեմոկրատ Հայնրիխ Լեվիի անանուն պարսավագիրը՝ «Արևելյան հարցի մասին կամ պե՞տք է արդյոք սոցիալիստական բանվորական կուսակցությունը թուրքանա։ Նախազգուշացման խոսք գերմանական սոցիալ-դեմոկրատիային» վերնագրով, որտեղ խիստ քննադատության էին ենթարկվում Վ. Լիբկնեխտի թուրքամետ հայացքները։ Այդ գիծը հետագայում զարգացվեց և դարձավ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ճնշող մեծամասնության կարծիքը։

Այդ սկզբունքային կարծիքը հիմնավորվում էր նաև արևմտահայերի դեմ թուրքական հալածանքները դատապարտող և նրանց ինքնապաշտպանական կռիվները արդարացնող փաստաթղթերի ու այլ հոդվածների հրապարակումով։ Վ. Լիբկնեխտի գրույթները ժխտող հավաստի փաստաթղթերի մեջ խիստ կարևորություն ունի գերմանացի բողոքական քահանա դոկտոր Իոհաննես Լեփսիուսի՝ 1896 թ. Բեռլինում հրատարակած «Հայաստանը և Եվրոպան» գիրքը, որում հավաքված էին բազմաթիվ վավերագրական տեղեկություններ 1894—1896 թթ. արևմտահայերի զանգվածային կոտորածների մասին։ Գիրքը գրված էր վեց մեծ տերությունների դեսպաններին՝ 1896 թ. փետրվարին թուրքական սուլթանին ուղղած զեկուցագրերի, ականատեսների ցուցմունքների հիման վրա։

---

9 Նույն տեղում, էջ 21։

10 Նույն տեղում, էջ 26։

11 К. Маркс, Ф. Энгельс,Соч., т. 28, с. 515.

12 Ф. Мерринг, Карл Маркс, История его жизни, М., 1957, с. 267.

13 Նույն տեղում։

14 Д. Рязанов, Очерки по истории марксизма, т. 1, М.—Л., 1928, с. 283.

Թուրքական լծի տակ արևմտահայերի ծանր վիճակի և նրանց ազատագրական պայքարի հարցերի լուսաբանմամբ «Նոյե Ցայթ»-ում հանդես է գալիս Հնչակյան կուսակցության հիմնադիր, սոցիալիստ Ավետիք Նազարբեկը (Նազարբեկյան)։ «Ես ինձ թույլ եմ տալիս այս համեստ հոդվածով,— գրում էր նա «Նոյե Ցայթի» 1895—1896 թթ. 41-րդ համարում,—բոլոր երկրների սոցիալիստական կուսակցությունների ուշադրությունը ուղղել թուրք-հայկական հարցի վրա... Չէ՞ որ համաշխարհային պրոլետարիատն այսօր մարդկության ազատագրման միակ գործուն առաջամարտիկն է, եվրոպական խաղաղության և եվրոպական հավասարակշռության լավագույն պահապանը։ Սոցիալիստական կուսակցությունները, որոնք օգտվում են մամուլի ազատությունից, ժողովների իրավունքից, ընտրական իրավունքից, որոնց ներկայացուցիչները խորհրդարանում իրենց ձայնն են բարձրացնում, ի վիճակի են հայ սոցիալիստների գործին ազդու կերպով նպաստել գործադրելով իրենց ազդեցությունը հասարակական կարծիքի և եվրոպական պետությունների վրա և ղրանով աջակցել անդադար շարժվող հայ ժողովրդին՝ Հայկական հարցի լուծման համար»[15]։

Գերմանիայի և Եվրոպայի շատ այլ երկրների սոցիալիստներ, առաջադեմ մարդիկ հանդես եկան հայերի պաշտպանությամբ։ Հայկական շարժումների պատճառների հիմնավորմանն ու պաշտպանությանն էր նվիրված Լա Բարբեի «Հարկերը Թուրքիայում և հայկական շարժումների պատճառները» հոդվածը, որում բացահայտվում էին հայկական ելույթների տնտեսական պատճառները։ Ընդգծելով, որ «հայկական շարժումների սկզբնապատճառը պետք է որոնել ժողովրդի տնտեսական ողբալի կացության մեջ», Լա Բարբեն հանգամանորեն վերլուծում է Թուրքիայում հայերի նկատմամբ կիրառվող հարկային դաժան համակարգը։ «Խեղճ ժողովուրդ,—գրում էր նա հայերի մասին,—վճարիր տունդ կառուցելու համար, վճարիր քո գլխի համար, վճարիր, որ դու ծնվել ես, որ դու ապրում ես, որ դու օդ ես շնչում, վճարիր քո արտի համար, քո այգու և բանջարանոցի համար։ Վճարիր քո ընտանիքի համար, քո քրտինքի արդյունքի համար, վճարիր պետությանը, վճարիր վաշխառուներին, վճարիր քրդերին... Վճարիր, վճարիր անվերջ։ Եթե այն ծով լիներ, ապա արդեն չորացած կլիներ, եթե գետ լիներ, կդադարեր հոսելուց... Հայի ողորմելի դրությանը, աղքատիկ տնտեսությունը վաղուց արդեն հյուծվել ու տապալվել են։ Ո՞ւմ կարող է նա բավարարել։ Ո՞ւմ կարող է դեռ վճարել։ Ի՞նչ է մնում նրան, եթե ոչ զենքի դիմել, արյուն թափել, մինչև իսկ առանց հավատալու իր ապստամբության հաջողությանը։ Այս շարժումները նման են սովյալների վերջին ջղաձգումներին։

Սակայն ժողովուրդներն այդքան շուտ չեն մահանում։ Օտար բռնակալները շատ ավելի հաստատ կկործանվեն, քան այն ժողովուրդը, որը պաշտպանում է իր հայրենիքը, իր հայրենի հողը և այն բոլորը, ինչ իր համար թանկ է»[16]։

1890-ական թվականներին բազմաթիվ լեզուներով լույս տեսած շատ գրքեր ու հոդվածներ անհերքելի կերպով ապացուցում էին, որ օսմանյան Թուրքիայի կառավարող շրջանները նախօրոք մշակել էին արևմտահայերի բարբարոսական ոչնչացման ծրագիրը, որի իրականացմանն օժանդակել են կայզերական Գերմանիայի ղեկավարները։ Չնայած դրան, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առանձին ղեկավարներ, ելնելով Թուրքիայի մասին Դ. Ուրքվարդի գրվածքներից, սխալ դիրք գրավեցին Արևելյան հարցում և, պաշտպանելով Թուրքիային, հանդես եկան հայ ժողովրդի ազատագրական պայքարի դեմ՝ այն համարելով Ռուսաստանի «խառնակչություններ» Թուրքիայի նկատմամբ։

---

[15] Die Neue Zeit, 1895/96, № 41, S. 500—501.

[16] Նույն տեղում, 1897, № 2, S 46.

Վ. Լիբկնեխտի և Ա. Բեբելի թույլ տված նման սխալները հանգամանորեն քննադատվեցին Ռոզա Լյուքսեմբուրգի կողմից[17]։ «Չեխոիշե Արբայթեր Ցայտունդ» թերթի 1896 թ. հոկտեմբերի համարներում տպագրված՝ «Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածաշարում Լյուքսեմբուրգը հերքում է Գերմանիայի սոցիալ դեմոկրատական մամուլում արտահայտված այն կարծիքը, որ իբր Թուրքիայում XIX դ. 90-ական թվականներին Սուլթան Համիդ 2-րդի կազմակերպած հայկական կոտորածները, հույների և հայերի ապստամբությունները, դիվանագիտական մեքենայությունների արդյունք են, մասնավորապես, Ռուսաստանի կողմից։ «Որոշ ժամանակ,—գրում է Լյուքսեմբուրգը,—կարելի էր մամուլի նույնիսկ այնպիսի արձագանքների հանդիպել, թե իբրև թուրքական սարսափները ընդհանրապես լոկ մտացածին են, բաշիբոզուկները՝ քրիստոնյա օրինակելի մարդիկ, իսկ հայերի ապստամբությունը՝ ռուսական ռուբլիով գնված գործակալների գործ»[18]։ Ռ. Լյուքսեմբուրգը ցույց է տալիս, որ Թուրքիան դարերի ընթացքում, երկրի ներսում ստեղծել է դասակարգային ու ազգային ճնշման դաժան համակարգ, որն էլ հասցրել է Թուրքիայի քայքայմանը։ «Սնանկություն մայրաքաղաքում, սնանկություն գյուղում,—գրում էր Լյուքսեմբուրգը,—պալատական հեղաշրջումներ Կոստանդնուպոլսում և ժողովրդական ընդվզումներ գավառում։ Այս բոլորը ներքին անկման վերջնական արդյունքներն էին դարձել»[19]։ Հույների, բոսնիացիների, հերցոգովինցիների, սերբերի, բուլղարների, հայերի մահացու կռիվը թուրքական իշխանությունների դեմ, ազգային-ազատագրական շարժումները Թուրքիայում Լյուքսեմբուրգը համարում է պատմական, բնական մի անհրաժեշտ պրոցես, դարերի անարդարությունից և շահագործումից լեռան չափ դիզված բոցավառ նյութի պայթյուն, որի հետևանքով Թուրքիան պետք է փլուզվեր որպես պետություն, և նրա փոխարեն պիտի ստեղծվեին նոր պետություններ։ Ռ. Լյուքսեմբուրգը նշում է, որ «սկզբունքորեն, սոցիալ-դեմոկրատիան միշտ կողմ է ազատագրական ձգտումներին։ Քրիստոնյա ազգերը, տվյալ դեպքում հայերը, ուզում են ազատագրվել թուրքական տիրապետության լծից և սոցիալ-դեմոկրատիան պետք է ճանաչի այդ»[20]։ Լյուքսեմբուրգը գտնում էր, որ հետամնաց Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ազգերի ազատագրությունը լիովին համընկնում է սոցիալիստական շարժման շահերին, որովհետև այն առաջադիմական երևույթ է, և դրանով իսկ այդ ազգերը հնարավորություն են ստանում կանգնելու կապիտալիստական զարգացման ուղու վրա։ Կապիտալիզմի զարգացումը հող կպատրաստի ժամանակակից շարժման և սոցիալ դեմոկրատիայի զարգացման համար։ «Ֆորվերտս» «Արևելյան քաղաքականության հարցի շուրջը» հոդվածում Ռ. Լյուքսեմբուրգը նշում էր, որ հայկական շարժումները կապված են Թուրքիայում տիրող տնտեսական հարաբերությունների հետ, և ելնելով դրանից, մերժում է Վ. Լիբկնեխտի անհիմն հարձակումը հայ սոցիալիստների դեմ, դատապարտում «Ֆորվերտս» խմբագրության անսկզբունքայնությունը գաղութային զավթումների և ազգային ճնշման հարցերում։

Ռ. Լյուքսեմբուրգի այս դիրքորոշման պաշտպանությամբ հանդես եկավ Է. Բերնշտայնը, 1897 թ. «Նոյե Ցայտունգի» հրատարակած «Գերմանական սոցիալ-դեմոկրատիան և թուրքական խառնակումները» հոդվածով, գրե-

---

17 Այս մասին տե՛ս Գ. Բ. Ղարիբջանյան, Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Երևան, 1971, նույնի՝ Ռոզա Լյուքսեմբուրգի նորահայտ հոդվածը Արևելյան հարցի մասին (Բանբեր Երևանի համալսարանի, 19.1 թ., № 2), նույնի՝ Ռոզա Լյուքսեմբուրգի «Ֆորվերտս» «Արևելյան քաղաքականության հարցի շուրջը» հոդվածի մասին (նույն տեղում, 1937, № 1)։

18 Sächsishe Arbeiter—Zeitung, 1896, № 234.

19 Նույն տեղում, № 235։

20 Նույն տեղում։

լով, որ ինքը միանգամայն համամիտ է Ռ. Լյուքսեմբուրգի «Ազգային կռիվները Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածաշարի՝ այդ հրաշալի աշխատության հիմնական մտքերի և հետևությունների հետ»[21]։ Հոդվածն սկսվում է այն դիտողությամբ, որ սուլթանական ռեժիմի և նրա դաշնակիցների դեմ Թուրքիայի հայերի կռիվների նկատմամբ սոցիալ-դեմոկրատական մամուլի դիրքորոշումն ամենևին էլ միասնական չէ։ Ի նպաստ հայերի գրված հոդվածներին հաջորդում են այնպիսիները, որոնց հեղինակներն առավել կամ նվազ չափով օսմանյան կառավարության կողմն են պահում և հայկական շարժումները վերագրում են ռուսական կառավարության գործակալների մեքենայություններին։ Բերնշտայնը Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համար պատվաբեր չի համարում հայերին իրենց ազատագրական պայքարում շաջակցելը, Գերմանական կայսրության հակահայկական քաղաքականությունը չմերկացնելը։ «Չկա ժամանակակից մի մեծ պետություն,—գրում է Բերնշտայնը,—որը ժողովուրդների սերը վաստակելու համար շատ ավելի քիչ բան արած լինի, ինչպես Գերմանիան։ Մի հայացք գցենք քարտեզի վրա և հարց տանք. ո՞ր ժողովրդի ազատագրմանն է Գերմանիան օգնել։ Համարյա ամենուր Գերմանիային գտնում ենք ճնշողների կողմը՝ ազգային-ազատագրական պայքարի դեմ... Հատկապես Արևելքում Գերմանիան գրել է տև էջ, սկզբից մինչև վերջ...»[22]։ Ամփոփելով իր ծավալուն հոդվածը, որի մի շարք դրույթների կարելի է չհամաձայնել, է. Բերնշտայնն ընդգծում է. «Հայկական հարցի առթիվ մենք վերջապես կարող ենք մեր ձայնը բարձրացնել հանուն Արևելքում ազատության և մարդկայնության, առանց վախենալու՝ դրանով սատարած լինել ցարիզմին։ Մեր բնական համակրությունը բոլոր ճնշվածների կողմն է, որոնք ոտքի են ելնում իրենց ճնշողների դեմ։ Մեր ընդհանուր շահագրգռվածությունն առաջադիմության համար՝ նաև հետ մնացող երկրներում, և մեր հատուկ շահագրգռվածությունը, որպես գերմանացիների, ստեղծել կարգավորված իրավիճակ և վերջ տալ Արևելքում տիրող ստոր մեքենայություններին. այս բոլորը հրամայում են մեզ այս առիթը անօգտագործելի թողնել։ Անգլիական սոցիալիստները և բանվորները տարբեր ձևերով, բայց ըստ էության միահամուռ ոտքի են ելել ստոր կերպով բռնադատված այս ժողովրդի համար և հանուն Թուրքիայի փաշայական տնտեսությունը վերջ տալուն. գերմանացիք թող նրանցից հետ չմնան»[23]։

«Ֆորվերտս»-ի 1897 թ. մարտի 4-ի համարում «Արևելյան հարցն ու սոցիալ-դեմոկրատիան» հոդվածով հանդես է գալիս Կ. Կաուցկին, որը, Արևելյան հարցը հանարելով սոցիալ-դեմոկրատիայի համար առանձնակի նշանակություն ունեցող խնդիր, գրում է, որ նոր պայմաններում «Արևելքի երկու բռնակալներ՝ սուլթանական Թուրքիան և ցարական Ռուսաստանը գտնվում են միևնույն ճամբարում»։ Հետևապես, Եվրոպայի դեմոկրատիան պետք է համախմբված կանգնի հակադիր ճամբարում», պաշտպանի այդ երկու պետությունների դեմ ուղղված ազատագրական շարժումները։

Կ. Կաուցկին գտնում էր, որ սոցիալ-դեմոկրատիան պետք է պաշտպանի ոչ միայն Հունաստանի և Կրետեի ապստամբ բնակչությանը, այլև բալկանյան երկրների բոլոր քրիստոնյա ժողովուրդներին, որոնք պայքարում են Թուրքիայի դեմ։ Կաուցկին գրում էր, որ տվյալ ժամանակաշրջանում «հարվածել Թուրքիային, նշանակում է խփել Ռուսաստանին», քանի որ «Թուրքիան դարձել է Ռուսաստանի վասալը»[24]։ Նա անտեսում էր այն փաստը, որ Թուրքիան սկսել էր դառնալ Գերմանիայի վասալը։

Արևելյան հարցում Կ. Կաուցկու և է. Բերնշտայնի դիրքորոշումները համընկնում էին։ Տարբերությունը միայն տակտիկական բնույթ էր կրում։

---

[21] Die Deue Zeit, 1896—97, № 4, S. 108—118.

[22] Նույն տեղում, S. 114.

[23] Նույն տեղում, S. 116.

[24] Vorwarst, 1897, № 53, S. II—III.

Հակառակ դիրքերում էին կանգնած Լիբկնեխտը և Բեբելը։ Վ. Լիբկնեխտը դեմ էր Կրետե կղզում Թուրքերի դեմ բռնկված ապստամբությանը, Հունաստանի հետ Կրետեի միացմանը, և, ընդհանրապես, բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը։ Նա գտնում էր, որ «չի հաջողվի այդ ժողովուրդներից պատնեշ կանգնեցնել Ռուսաստանի դեմ»[25]։ Վ. Լիբկնեխտը և Ա. Բեբելը նշում էին, որ Թուրքիան քայքայող ամեն մի շարժում, այդ թվում նաև հույների, հայերի և մյուս ազգությունների ապստամբությունները, ցարիզմի թանձարկություններ կամ նրան օգնող գործոններ են, հետևաբար սոցիալ-դեմոկրատները պետք է հանդես գան Թուրքիայի պաշտպանությամբ՝ ընդդեմ հակաթուրքական շարժումների, մասնավորապես արևմտահայերի ազատագրական ելույթների։ Հոդվածն սկսելով Ռուսաստանի նվաճողական լայն պլանների մասին Պյոտր Մեծի այսպես կոչված կտակով, Բեբելը դրում էր, որ Ռուսաստանը հետևողականորեն իրականացնում է ամբողջ Եվրոպային տիրանալու, աշխարհին իշխելու իր ծրագիրը։ Սակայն վաղուց ապացուցված է, որ այսպիսի ոչ մի կտակ գոյություն չի ունեցել, որ այդ կեղծիքը հնարվել է Արևմուտքում՝ դեռևս 1797 թ. և օգտագործվել Արևմտաեվրոպական քաղաքագետների ու հրապարակախոսների կողմից հակառուսական պրոպագանդայի համար։ Հայտնի է, որ Ֆ. Էնգելսը «Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականությունը (1889—1890 թթ.)» հոդվածում Պյոտր Առաջինին որակելով որպես մեծ մարդ, նշել է, որ այդ «այսպես կոչված կտակը, ըստ երևույթին, կազմված է որևէ էպիգոնի կողմից»[26]։ Էնգելսը նշում է, որ Ռումինիան, Սերբիան, Չերնոզորիան ընդլայնել են իրենց տարածքները և անկախություն ստացել շնորհիվ Ռուսաստանի[27]։

Վ. Լիբկնեխտի և Ա. Բեբելի՝ Թուրքամետ Դ. Ուրքվարդի միտումնավոր գրվածքների ազդեցության տակ արտահայտած կարծիքները մերժվեցին ոչ միայն գերմանական սոցիալ-դեմոկրատիայի շատ ներկայացուցիչների, այլև ռուս, ֆրանսիացի, իտալացի, լեհ, բելգիացի, հայ սոցիալ-դեմոկրատների, մարքսիստների, սոցիալիստների և այլ առաջադեմ մտածողների կողմից[28]։

Այսպիսով, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և նրա ղեկավարների ճնշող մեծամասնությունը (Է. Բերնշտայն, Կ. Կաուցկի, Ռ. Լյուքսեմբուրգ և ուրիշներ), հակառակ գերմանական կառավարող շրջանների՝ Թուրքամետ քաղաքականությանը, հետևողականորեն հանդես են եկել Թուրքական ջարդարարների դեմ՝ Հայ դատի վճռական պաշտպանությամբ։

ГЕРМАНСКАЯ СОЦИАЛ-ДЕМОКРАТИЯ И АРМЯНСКИЙ ВОПРОС В КОНЦЕ XIX ВЕКА

Г. Б. ГАРИБДЖАНЯН
Академик НАН РА

Резюме

Проблема «Германская социал-демократия и Армянский вопрос» мало изучена. Между тем видные немецкие социал-демократы Э. Бернштейн, К. Каутский, Р. Люксембург и др. защищали национально-освободительную борьбу армянского народа, резко выступая против политики официальной Германии. При этом они отмечали прогрессивный характер борьбы находившихся под османским игом народов, в том числе и армянского, за свободу и независимость.

---

[25] Vorwärst, 1897. 10. III, № 58, s. 106.

[26] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 22, с. 20.

[27] Նույն տեղում, էջ 44։

[28] Ю. Мартов, Записки социал-демократа, М., 1924, с. 324, 326.